

# Ա Ր Վ Ե Ս Տ

## ԱՍՏՂԻԿ ՄՈՒՇԵՂՅԱՆ

### ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՅՈՒ ԵՐԱԺՇՏԱԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

«Մանչևի այրն Աստուծոյ եւ ախոյեանն հաւատոյ,  
զարդարեալն ամենայն առաքինութեամբ,  
եւ լցեալ շնորհէն աստուածային  
բարոնապետն Գրիգորիոս իլաթեցին»

Առաքել Բաղիշեցի

Հայոց միջնադարի նշանավոր գործիչներից մեկը՝ Գրիգոր Մերենց իլաթեցին (1349-1425) հայտնի է իր բազմարդյուն և արգասավոր գործունեությամբ: Նա ոչ միայն անվանի եկեղեցական էր, այլև պատմագիր, բանաստեղծ, ծաղկող, գրիչ, մեկնիչ, խմբագիր, մանկավարժ, հասարակական գործիչ<sup>1</sup>: Մնվել է Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Բզնունյաց գավառի իլաթ քաղաքում: Նախնական կրթությունից հետո ուսումը շարունակել է Յիպնավանքում՝ Վարդան ճգնավորի մոտ (1361-1367), ապա սկսել է ուսուցչական և քարոզչական գործունեությունը: Որոտնավանքում (Գրիգոր Տաթևացու հետ մեկտեղ) և Երնջակի (Գողթն գավառ) Ապրակունյաց վանքում աշակերտել է Հովհան Որոտնեցուն (1378-1386): 1387 թ. գնացել է Այրիվանք՝ տեսնելու Մխիթար Այրիվանեցու Փանձարանը, այնուհետև վերադարձել հայրենիք, որտեղ խառաքատա

<sup>1</sup> Իլաթեցու կյանքին և գործունեությանն է նվիրված Ա. Մաթևոսյանի և Ս. Մարաբյանի «Գրիգոր Մերենց իլաթեցի» աշխատությունը (Եր., 2000): Նրա մասին տես նաև Ք. Տեր-Գավթյան, Հայկական սրբախոսություն. վարքեր և վկայաբանություններ (V-XVIII դդ.), Եր., 2011, էջ 262-267, Լ. Խաչերեան, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները, դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները միջնադարեան Հայաստանում եւ Կիլիկիայում (V- XVI դդ.), Լիզպոն, 1998, հ. 2, էջ 193-199:

կամ Սուհարա Ս. Աստվածածին անապատում իր դպրոցն էր բացել Սարգիս Ապրակունեցին: Այստեղ էլ շարունակել է ուսումը, ստացել վարդապետական աստիճան, որից հետո գիտակրթական լայն գործունեություն է ծավալել Խառաբաստավանքում, Մեծոփավանքում և Յիպնավանքում:

Գրիգոր Խլաթեցին եղել է փայլուն երաժիշտ, հմուտ երգիչ, տիրապետել խազագրություն արվեստին, հեղինակ է «Խրատ ժամատեղաց» և «Գովուլիւն Սաղմոսի» ծիսագիտական գրվածքների: Իր դասավանդած վարդապետարաններում նա կրթել է բազում բանիբուն երաժիշտների: Նրանցից մեկն Առաքել Բաղիշեցին է, որ ըստ արժանվույն գնահատելով իր ուսուցչի վաստակը, նրան օժտել է բազմաթիվ պատվանուններով՝ կոչելով «Լուսաւորիչ հայոց», «րաբունապետ Հայոց Մեծաց», և համեմատել Գրիգոր Լուսավորչի, Մեսրոպ Մաշտոցի, Մովսէս Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Ներսէս Շնորհալու հետ<sup>2</sup>:

Նշանակալի է Գրիգոր Խլաթեցու ծավալած խմբագրական գործունեությունը: Հայսմավուրք և Ճառընտիր ժողովածուների բացի, նա խմբագրել է Գանձարան ժողովածուն, ըստ Ա. Մաթևոսյանի՝ 1399-1401 թթ.<sup>3</sup>: Խլաթեցու ձեռքով գրչագրված Գանձարանի հիշատակարանում կարդում ենք. «[...] Ես՝ տրուպս կարգաւորաց և յետինս ի բանասիրաց՝ անւամբս Գրիգոր պիտակաբար, [...] մեծաւ տաժանամբ ի հոգս անկեալ ժողովեցի զպիտանի գանձերս, և եղի ի կարգաւ ի միում տրփի զասացեալս ի հոգեկիր արանց յառաջնոցն և յետնոցս, որք արժանի եղեն պարգևաց Հոգոյն Սրբոյ և ասացին զանազան ոճով ի կերպ և ի գոյնս ձայնի, ի կարգ և ի շարս բանի՝ զանազան եղանակաւ. ի պալ-ձառուլիւն Սուրբ Եկեղեցոյ և ի զուարճուլիւն մանկանց Նոր Սիրովնի, որ աւր ըստ աւուր գեղգեղեալ փոփոխեն ի փառս Աստուծոյ և ի պատիւ սրբոց նորա»<sup>4</sup>:

Գանձարանի խմբագրության մասին բազմաթիվ գրառումներ կան հայերեն ձեռագրերի հիշատակարաններում: 1445 թ. Աղթամարում օրինակած Գանձարանի հիշատակարանում Թովմա Մինասենցը գրում է. «Վարդապետ Գրիգոր անուն Դըլաթեցի, ըստ նախնեացն Մերենց կոչեցեալ, յոյժ հանձարեղ եւ բանիբուն եւ առատամիտ, ոչինչ նըւազ գոլով քան զյառաջ յիշեցեալ վարդապետսն<sup>5</sup>, այլ գերազանց գտաւ քան զնոսին: Սորա առեալ զառաջնոյ երգեալ զանձարանսն եւ յամենեցունցն զհամեղաբանսն եւ զքաղցրեղանական հաւա-

<sup>2</sup> Առաքել Բաղիշեցի, «Եղերեգոսփին ի մահ նահատակութեան Մերենց Գրիգոր վարդապետի Խլաթեցոյ», Հայոց նոր վկաները (1153-1843), գիտական հրատարակութիւն, աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 274-279: «Դարձեալ յԱռաքել վարդապետէ Վասն վարդապետին իւրոյ Գրիգոր Մերենց կոչեցեալ», տե՛ս Ա. Մաթևոսյան և Ս. Մարաբյան, նշվ. աշխ., էջ 210-218:

<sup>3</sup> Ա. Մաթևոսյան, «Գրիգոր Խլաթեցի», Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 3, եր., 1977, էջ 216: Խլաթեցու խմբագրած Գանձարանների մասին տե՛ս Ա. Մաթևոսյան և Ս. Մարաբյան, նշվ. աշխ., էջ 69-74, 118-119:

<sup>4</sup> Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 5328, ք. 289ա:

<sup>5</sup> Նկատի ունի նախապես հիշատակված նշանավոր գամնասաց-տաղասացներին՝ Գրիգոր Նարեկացուն, Ներսէս Շնորհալուն, Մխիթար Այրիվանեցուն և այլոց:

քեալ սրբագրեաց մեծաւ աշխատութեամբ եւ ի յոտն եհան: Թէ պակաս բան կայր ի վանկան՝ յաւելցոյց յինքենէ, եւ թէ աւելի բան կայր, որ հատակոտոր բերէր ի վանկան՝ քերեալ ի բաց եհան»<sup>6</sup>: Նույնպիսի տողեր ենք գտնում նաև Թովմա Բաղիշեցու գրած վարքում. «Այլ և ժողովեալ գյառաջասացեալ գանձերսն յառաջին վարդապետացն՝ զոր անընդունակ և անպէտս անկեալ կայր, և սրբագրեալ ճարտարաբանեաց և արար զգիրս Գանձարանին, տաղով և մեղեղով, յուրախութիւն և ի ցնծութիւն մանկանց եկեղեցւոյ. և այնպիսի անուշաձայն եղանակաւ պայծառացոյց զգրունս սուրբ եկեղեցեաց, մինչ զի լուսեղէն զուարթնոցն պարակցութիւն ի յերկրի երեւիւր, և զի ոչ էր եղեալ այնպիսի ուրախութիւն հոգևոր եկեղեցեացս Հայաստանեայց յաւուրս մերոց իշխանացն և թագաւորացն»<sup>7</sup>:

Ըստ էութեան սկզբնավորվելով X դարում Գրիգոր Նարեկացու գանձ-տաղային ստեղծագործութեամբ<sup>8</sup>, և ձևավորվելով ու մեծապես հարստանալով ներսես Շնորհալու, ապա Մխիթար Այրիվանեցու և այլոց գրական ժառանգութեամբ, XIII-XIV դարերում Գանձարան ժողովածուն մեծ ծաղկում է ապրել<sup>9</sup>: Մի նոր՝ շրջագարձային փուլ է սկսվել ժողովածուի պատմութեան մեջ, երբ Գրիգոր Խլաթեցին վերանայել է այն՝ հայոց Տոնացուցում տեղ գտած փոփոխություններին ու լրացումներին համապատասխան: Նա հարստացրել է մատյանը նոր միավորներով, վերախմբագրել հները<sup>10</sup>, «ընտրել և կամ ստեղծել այնպիսի նոր գանձեր, որոնք համահունչ լինեին ժամանակի ազգային-եկեղե-

<sup>6</sup> Լ. Խաչիկյան, *Ժե դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, մասն Ա (1401-1450 թթ.), Եր., 1955, էջ 583:

<sup>7</sup> Հայոց նոր վկաները, էջ 267:

<sup>8</sup> Ուսումնասիրելով Գրիգոր Նարեկացու գանձ-տաղային ստեղծագործության՝ մեզ հասած գրեթե ամբողջական ժառանգությունը, բազմահմուտ բանասեր Ա. Քյոշկերյանը հանգել է այն կարծիքին, որ պահպանված մուշնեղեր և հնագույն Գանձարաններում դրանց ունեցած համակարգային պատկերը ենթադրել են տալիս, որ հեղինակն իր գանձերը, տաղերն ու փոխերը հորինել է տոնական որոշակի դասակարգումով՝ միավորելով միևնույն տոնին նվիրված շարքերի մեջ, իբրև եկեղեցական մի ձեռնարկ, մի **Գանձատուր**, որն էլ հիմք է հանդիսացել հետագայի Գանձարան ժողովածուի համար: Տե՛ս Ա. Քյոշկերյան, Գրիգոր Նարեկացու գանձերն ու Գանձարանների սկզբնավորումը, *Բանբեր Մատենադարանի*, 10, 1971, էջ 64-68, Ա. Քյոշկերյան, *Գանձարանային մշակույթ*, Եր., 2008, էջ 55-56, Գրիգոր Նարեկացի, *Գանձտետր*, Ներածութիւն՝ Ա. Քեոշկերեանի, տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. ԺԲ, կազմող և խմբագիր՝ Հ. Թամրազեան, Եր., 2011, էջ 617:

<sup>9</sup> Ա. Քյոշկերյանը գանձարանային մշակույթի զարգացման ուղին բաժանում է երեք փուլի՝ սկզբնավորումը դնելով Ժ-ԺԲ, ծաղկումը՝ ԺԳ-ԺԶ, իսկ մարումը՝ ԺԷ-ԺԸ դարերում: Տե՛ս Գրիգոր Նարեկացի, *Գանձտետր*, Ներածութիւն Ա. Քեոշկերեանի, Մատենագիրք Հայոց, հ. ԺԲ, էջ 611: Գանձարան ժողովածուի ձևավորման ու զարգացման ընթացքի մասին տե՛ս նաև Ա. Քյոշկերյան, *Գանձարանային մշակույթ*, էջ 5-45, Վ. Գեորգիյան, Առաջաբան «Գանձարան» ժողովածուի բնական բնագրի հրատարակության, Մատենագիրք Հայոց, հ. ԺԳ, Գիրք Ա, Անթրիլիս-Լիբանան, 2008, էջ 9-25, Ա. Մաթևոսյան և Ս. Մարաբյան, *Իշխ. աշխ.*, էջ 69-74:

<sup>10</sup> Ա. Մաթևոսյան և Ս. Մարաբյան, *Իշխ. աշխ.*, էջ 70-71:

ցական ըմբռնումներին, իղձերին ու ակնկալիքներին»<sup>11</sup>: Նախկինում գործածված Քարոզ անվանումը փոխարինել է Գանձով, վերջնականապես հաստատել ըստ եկեղեցական տոնակարգի դասավորված գանձարանային կանոնի ձևը՝ միևնույն տոնին նվիրված գանձ-տաղ-փոխ (հորդորակ)-մեղեդի շարքով, երբեմն դրանց նախադասելով կաֆա<sup>12</sup> կոչված փոքրիկ ոտանավորները: Նախկին անհանգ ու ազատ ոտանավորների փոխարեն Խլաթեցին հորինել է հանգավոր տաղաչափությամբ գործեր, միաժամանակ պարզեցրել դրանց բանաստեղծական լեզուն՝ մատչելի դարձնելով ընթերցողական լայն շրջանակի համար: Խլաթեցիական Գանձարանների հասկանչական դրսևորումներից մեկը միևնույն տոնին նվիրված կանոնում մեկից ավելի գանձերի կամ մի քանի տաղերի առկայությունն էր՝ հորինված տարբեր հեղինակների կողմից: Այդպիսով, ինչպես Ա. Քյոչկեռեանն է եզրակացնում, ժողովածուն ձեռք էր բերում ժամանակի պահանջներին համապատասխան ճոխություն, իսկ գանձասաց կամ տաղասաց հեղինակն այլևս չէր առանձնանում որպես անհատականություն, որպես ուրույն դեմք, որովհետև Խլաթեցու նպատակն էր՝ ներկայացնել Գանձարանն իբրև ամբողջական, լիարժեք ժողովածու<sup>13</sup>:

Իր խմբագրած Գանձարան ժողովածուի համար Գրիգոր Խլաթեցին հորինել է մեծ թվով գանձեր, տաղեր, հորդորակներ և մեղեդիներ: Ինչպես գրում է Թովմա Մեծոփեցին՝ «Եւ բազում երգս գանձուց եւ տաղից յիշատակ թողեալ ինքեան՝ յոյժ տօնասէր եւ պատուօղ սրբոց, մինչ զի ոչ եղեալ է և ոչ լինելոց»<sup>14</sup>: Առաքել Բաղիշեցին ևս նշում է այդ փաստը՝ «նոր զարդարեաց զեկեղեցի... գանձիւ և տաղիւ եւ երգօք շարականօք»<sup>15</sup>, նաև հավելում

Նման նախնոյն այն Ներսեսի,  
Եղբօրն մեծի տէր Գրիգորի,  
Նոր զարդարեաց զեկեղեցի,  
Գանձ և տաղիւ բազմագունի<sup>16</sup>:

Այդ մասին վկայություններ կան նաև հայերեն ձեռագրերի հիշատակարաններում. «Եվ յաւել յինքենէ բազում գանձս և տաղս համեղաբանս և քաղցրեղա-

<sup>11</sup> Վ. Դերիկյան, Հայ միջնադարյան գանձերը և «Գանձարան» ժողովածուն, բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 9:

<sup>12</sup> Սրանք գանձերին նախորդող 4, 6 կամ 8 տողից բաղկացած չափածո կտորներ էին, որ հիմնականում արտահայտում էին գանձի բովանդակությունը:

<sup>13</sup> Ա. Քյոչկեռեան, Գանձարանային մշակույթ, էջ 187:

<sup>14</sup> Պատմություն համառոտ անօրէն թամուրին, որ ելեալ ի յաշխարհէն Խորասանու եւ գնաց մինչեւ ի ծովն ովկիանոս, արարեալ Թովմայ վարդապետի, Թովմա Մեծօփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Եր., 1999, էջ 61-62:

<sup>15</sup> Առաքել Բաղիշեցի, «Նահատակութիւն Խլաթեցոյն Գրիգոր Մերենց վարդապետի», տե՛ս Ա. Մարտոսյան, Ս. Մարաբայան, նշվ. աշխ., էջ 209:

<sup>16</sup> Առաքել Բաղիշեցի, «Եղերեզոսիւն ի մահ նահատակութեան Մերենց Գրիգոր վարդապետի Խլաթեցոյ», Հայոց նոր վկաները, էջ 276 :

նակա Տէրունական տաւնից և ամենայն սրբոց, ի վերայ անուան իւրոյ գրծագրելով գտընառաջս գանձիցն» (Գանձարան, 1445 թ., գրիչ՝ Թովմա Մինասենց)<sup>17</sup>: Եվ ապա. «Վարդապետ ոմն շնորհալի, Գրիգոր անուն, ի մայրաքաղաքէն իլաթայ, Ծերենց կոչեալ, յոյժ կորովամիտ, հանճարեղ եւ բանիբուն, և անհամեմատ քարտուղար [...] գանձս բազում ասաց յինքենէ ի վերայ անուան իւրոյ, եւ տաղ եւ մեղեդիս, եւ եթող գրով յիշատակ իւր, ի պայծառութիւն Սուրբ Եկեղեցւոյ եւ ի զուարճութիւն մանկանց Սիովնի» (Հայսմավուրք, 1581 թ., Խիզան, գրիչ՝ Հոբ սարկավագ)<sup>18</sup>:

Խլաթեցու ուշադրութեան կենտրոնում է եղել գանձարանային միավորների ձայնեղանակային կարգավորութեան խնդիրը: Այսպես, ՄՄ 3540 ձեռագրում (1408 թ., Յիպնավանք, թթ. 6ա-8ա) գետեղված է մի ցանկ, որում հավաքված են տարբեր տոներին երգվող տաղերն ու մեղեդիներն ըստ «գոյների»: Դրանք ստորաբաժանված են չորս խմբի և ունեն հետևյալ խորագրերը՝ «Մեղեթիքս մի գոյն են», «Մեղեթիներս մի գոյն են», «Ուրիշ գոյն է» և «Այլ իմն գոյն է»: Երկրորդ խորագրի ներքո, օրինակ, մեկտեղված են «Գովեստ բերկրանաց», «Ի հանդէս տօնի քո», «Այսօր անդրանիկ Հօր», «Այսօր աւետեաց ուրախութեան հնչումն» և այլն, իսկ չորրորդի ներքո՝ «Աէր յառաւօտէ», «Հաւուն, հաւուն», «Ես ձայն գառիւծուն», «Առ պարտիզպանն ձայնէր Մարիամ», «Ծարաւեցավ Տէրն ի Խաչին» և այլ կտորներ: Նմանատիպ դասակարգումներ հանդիպում են այլ ձեռագրերում՝ գանձերի առնչությամբ<sup>19</sup>: Փաստորեն միջնադարում Շարակնոցից, Ժամագրքից և Խաչագրքից բացի՝ Ութձայն համակարգի երաժշտատեսական դրույթները կիրառական են եղել նաև Գանձարաններում, և դրա իրականացնողներից մեկն էլ եղել է Խլաթեցին<sup>20</sup>:

Գրիգոր Խլաթեցու գրչին են պատկանում Տերունական և սրբոց տոներին, ինչպես նաև հայ մարտիրոս-նահատակներին նվիրված բազմաթիվ երգեր.

ա. գանձեր՝

«Գոչումն ըղձագին» (Մննդյան Ութերորդ օրվա), «Գովեալ և օրհնեալ, Աստուածդ Բարձրեալ և փառաւորեալ» (Տյառնընդառաջի), «Գոչումն ըղձական» (Ղազարու հարություն), «Գերագոյն էից» (Ավագ Երկուշաբթի օրվա), «Գործ արարչական» (Ավագ Երեքշաբթի օրվա), «Գոյից Առաջին Երկնից Արփային» (Հիսուս Քրիստոսի Հարություն), «Գերաննառ արփի, գոլ պատճառ էի» (Հարություն և Գիշերապաշտման), «Գաղտնի խորհրդին» (Նոր Կիրակիի), «Գերամբարձ Աստուած» (Կիրակամտի), «Գոյին անեղի, գոյին անմահի»

<sup>17</sup> Լ. Խաչիկյան, Ժե դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 583:

<sup>18</sup> Հ. Սահակ վրդ. Ճեմնեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ե, Յայսմավուրք-Գանձարան-Տաղարան-Տօնացոյց, Վենետիկ – Ս. Ղազար, 1995, սիւն. 180:

<sup>19</sup> «Գանձերու գոյն այս է», տե՛ս ՄՄ 541 (1673 թ.), թթ. 164բ-167բ, 201բ-203բ:

<sup>20</sup> Այս մասին տե՛ս Ն. Թահմիզյան, «Հայկական Ութ-ձայնի գանձարանային հատվածի մասին», Բանբեր Մատենադարանի, 15, 1986, էջ 53-54:

(Ս. Աստվածածնի Ծննդյան), «Գովաբանեալ Սուրբ Աստուածածին» (Ս. Աստվածածնի Վերափոխման), «Գլուխն եկեղեցոյ, վէմն հաւատոյ» (Վարագա Ս. Խաչի), «Գերագոյն բարի, Փրկիչ աշխարհի» (Ս. Հովհաննէս Մկրտչի), «Գոյակն էական, Հաւ սահման» (Գլխատման Ս. Հովհաննէս Մկրտչի), «Գերաւփի պայծառ» (Ս. Թադէոսի և Բարդուղիմէոսի), «Գերագոյն գոյէ» (ՀՔ Առաքելոց), «Գաւազան ծաղկեալ» (Ս. Նիկողայոս հայրապետի), «Գետ հոսեալ աստուածային» (Ս. Գրիգոր Աստվածաբանի), «Գոյիդ հըզարի» (Գլակա վանաց Ս. Կարապետի և Մկրտչի), «Գանձ սիրոյ Քոյին» (Ս. Սուքիասյանց<sup>21</sup>), «Գեղապանձ լուսով» (Ս. Ատոմյանց), «Գոյ մեզ ցնծալի և ուրախալի» (Ս. Ներսէս հայրապետի և Խաղ եպիսկոպոսի), «Գոհաբանեալ Տէրդ ամենայնի» (Ս. Վարդանանց), «Գրքացեալ Քոյին, Արքայ երկնային» (նույնպիսի սկսվածքով երկու գանձ նվիրված Ս. Վահան Գողթնեցուն և Զաքարիա Աղթամարցի կաթողիկոսին), «Գթա ի մեզ, Տէր ամենակալ» (ձեռնադրույթյան երիցու)։

բ. տաղեր, հորդորակներ ու մեղեդիներ՝

«Գոյիդ անեղ անըսկըգբան» (տաղ Ավետարանին), «Գոչէր հրեշտակն» (Հիսուս Քրիստոսի Հարույթյան), «Գերահրաշ Աստուած գոյով» (Պայծառակերպություն)<sup>22</sup>, «Անմեղ անարատ Գառինն» (Ս. Աստվածածնի Վերափոխման), «Ամփոփեալ գնշան Խաչին ի Վասպուրական երկրին» (Վարագա Ս. Խաչի), «Բանն որ ի Հօրէ» (Առաքելոց), «Աստուած փառաց, Լոյսդ անֆին» (Ս. Կյուրեղ հայրապետի), «Այսօր ժողովեալ մանկունմ» (Ս. Գրիգոր Լուսավորչի Մուտն ի Վիրապն), «Գովեստ փեզ բարեաց պատճառ» (Ս. Գրիգոր Լուսավորչի որդիների և թոռների), «Գրիգոր պսակն ազգի» (նույնի հորդորակ), «Գոհաբանեալ Տէր, Սուրբ Հոգի» (Ս. Թեոդորոս զորավարի), «Ի հանդէս տօնի ֆո բախացեալ տօնեմմ» (Ս. Պետրոս հայրապետի և Աբիսողոմ սարկավագի), «Տէր բարեբար Հաւ Միածին» (Ս. Աբգար թագավորի), «Երջանիկ հոգիահրաշ երանելին Սուրբ Սուփիաս» (Ս. Սուքիասյանց), «Սուրբ Ոսկի ֆահանայդ նազելի» (Ս. Ոսկյանց), «Շնորհաց Հոգոյն ընդունարան» (Ս. Վահան Գողթնեցու), «Պաղատանամ Սուրբ Նախահարց» (Մարտիրոսաց և ամենայն սրբոց), «Աստուած անեղ և անվախճան» (երգ Գիշերապաշտման), «Գթա ի մեզ Հայրդ երկնատր» (նույնի հորդորակ), «Պատճառ պարձանաց» (Առաջավորաց Ուրբաթուն), «Առ Հայրդ աղաղակեմ» (Պահոց Երրորդ կիրակիի), «Գանգատ ունիմ ասել Քեզ» (Պահոց Հինգերորդ կիրակիի)։

Խլաթեցին հեղինակել է նաև Ս. Աստվածամորը նվիրված «Դրուատ գովութեան ի Սուրբ Աստուածածինն» երկը<sup>23</sup>, Գրիգոր Նարեկացուն նվիրված

<sup>21</sup> Խորագրերում երբեմն նաև՝ Ս. Ոսկյանց, տե՛ս ՄՄ 8366, ք. 209բ։

<sup>22</sup> ՄՄ 6851 ինֆնագիր Գանձարանում (ք. 235բ) խորագիրն է «Յորդորակ Գոհարին»։ նկատի ունի Գրիգոր Նարեկացու «Գոհար վարդն» տաղը։

<sup>23</sup> Բնագրի հրատարակությունը տե՛ս Ա. Մաթևոսյան, Ս. Մարաբյան, նշվ. աշխ., էջ 136։

«Գովեստ տացուք Հօր անեղին» գանձը<sup>24</sup>, «Գովեստ գեղ, ով Գանձարան»<sup>25</sup> շափածո հիշատակարանը, ինչպես նաև մի շարական՝ «Վասն տնտես արհնեղոյ» խորագրով («Փոփո հասախս կրանաստանի» սկզբնատողով)<sup>26</sup>:

Գանձերի ու տաղերի բերված ցանկը<sup>27</sup> ճշգրտել ենք, առաջին հերթին, ըստ հեղինակի ինֆնագիր Գանձարանների, որոնցում, հատկապես տաղերից ու հորդորակներից առաջ, նա հաճախ նախադրել է «ի գծողէս Գրիգորէ»<sup>28</sup>, «ի գծողէս», «ի գրչէս» կապակցությունները (տե՛ս ՄՄ 5328<sup>29</sup>, թ. 114բ, 145բ, 277բ, ՄՄ 6851<sup>30</sup>, թ. 76ա, 118բ, 224բ, 235բ, ՄՄ 8366<sup>31</sup>, թ. 2ա, 4ա, 34բ և այլն): Բացի այս, գանձերին նախորդող կաֆաներում<sup>32</sup>, ինչպես նաև գանձերի վերջնամասում<sup>33</sup> նա հստակ նշում է իր անունը<sup>34</sup>: Իսկ առհասարակ՝ գանձերի (մեծավ մասամբ) և տաղերի (սակավ դեպքերում) տների, հաճախ նաև՝ միևնույն տան տողերի սկզբնատառերը հողում են «Գրիգոր», «Գրիգորի է սա», «Գրիգորի է երգս բանի» ծայրակապերը<sup>35</sup>:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 146:

<sup>25</sup> ՄՄ 424, 474, 6495, 7785 և այլն: Տե՛ս նաև՝ Ն. Քարամեան, «Հին հայ երգիչներ», Արարատ, 1895, էջ 129 և Ա. Մաքևոյան, Ս. Մարաբյան, նշվ. աշխ., էջ 74:

<sup>26</sup> Ա. Մաքևոյան, Ս. Մարաբյան, նշվ. աշխ., էջ 149:

<sup>27</sup> Այն, անշուշտ, վերջնական չէ և ենթակա է լրացման:

<sup>28</sup> «Ի գծողէս Գրիգորէ» կապակցությունը երբեմն պահպանվել է իլյաբեցու ինֆնագրերից արտագրված ձեռագրերում, ինչպես XVI դարում (տեղն անհայտ) արտագրված Գանձարանում (ՄՄ 4385, ք. 13բ, 129բ, 166բ, 184ա, 229բ, 321ա, 352ա), իսկ երբեմն էլ դարձել «ի Գրիգոր վարդապետէ» (ինչպես ՄՄ 3540 ձեռագրում): Այս մասին տե՛ս Ա. Մաքևոյան, Ս. Մարաբյան, նշվ. աշխ., էջ 50:

<sup>29</sup> Փե դար, 1408 թվականից հետո. տե՛ս նույն տեղում, էջ 51:

<sup>30</sup> Փե դար, մինչև 1408 թ., նույն տեղում, էջ 50:

<sup>31</sup> 1387 թվականից հետո, նույն տեղում, էջ 46:

<sup>32</sup> Գրանցից մեկից տեղեկանում ենք, օրինակ, որ Ս. Սուֆիասյանց նվիրված և՛ գանձի, և՛ տաղի հեղինակը ինքը՝ իլյաբեցին է՝ «Ձերգողըս բանի/ Գանձիս եւ տաղի/ ՁԳրիգոր եղկելի/ Այլ եւ ստացողի եւ փոխարկողի/ Սորին եւ ստողի/ Խընամ տանողի/ Եւ լաւ պահողի/ Մաքրումն եղիցի. Ողորմեա մեզ» (ՄՄ 4385, ք. 152բ):

<sup>33</sup> «Երգոյս երգաղի և սրբագրողի/ Անմիտ Գրիգորի/ Այլև ստացողի/ Սիրով հայցողի/ Մասն ի պարգևի ողորմեաց» (ՄՄ 6851, ք. 172ա):

<sup>34</sup> Տաղերից մի ֆանիսի հեղինակային պատկանելությունը տարակարծության տեղի է տվել, ինչպես, օրինակ, «Սուրբ Ոսկի, ֆանանայդ նագելի», «Գանգատ ունիմ ասել Քեզ», «Պաղատանամ Սուրբ Նախահարց» և այլն, որ վերագրվել են Գրիգոր Արծկեցուն: Սակայն իլյաբեցին ունեցել է նաև մի ֆանի այլ մականուն՝ *Բզնունի, Յիպնացի կամ Արծկեցի*, ինչը հիմք է հանդիսացել հաստատելու, որ ձեռագրերում հիշատակվող Գրիգոր վարդապետ Արծկեցին նույն Գրիգոր իլյաբեցին է. տե՛ս Ա. Մաքևոյան, Ս. Մարաբյան, նշվ. աշխ., էջ 37:

<sup>35</sup> Հարկ է նշել, սակայն, որ «Գրիգոր» ծայրակապը միշտ չէ, որ կարող է հիմք ծառայել այս կամ այն երկր իլյաբեցուն վերագրելու համար: Նման փաստերի հաճախ ենք հանդիպում ձեռագրացուցակների ցանկերում կամ այլուր, երբ հաշվի չեն առնվում երկերի ձեռագրական վաղագույն գրառումները: Իբրև օրինակ բերենք իլյաբեցուն ընծայվող «Գովեստ բերկրանաց ֆաղցրաձայնեալ» Ս. Հրեշտակապետաց տաղը, որն իրականում նրանը չէ, ֆանի որ տեղ է գտել դեռևս 1348 թ. Սսում գրչագրված Տաղարանում (տե՛ս *Յուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. Ե, ձեռ. 2070, ք. 79ա):

Գանձարանը խմբագրելիս Խլաթեցին գանձեր և տաղեր է պատվիրել նաև իր գրչակից ընկերներին՝ Առաքել Բաղիշեցուն, Մատթեոս Զուղայեցուն, Ոստանցի Գրիգոր վարդապետին՝ ինչպես հուշում են դրանց ենթախորագրերն ու ծայրակապերը՝ «Ի Մաթեոսէ խնդրեաց Գրիգորն», «Ի յԱռաքելէ խնդրեալ է Վարդապետն» և այլն<sup>36</sup>:

«Գանձարան» մատյանի համար Գրիգոր Խլաթեցու հորինած բազմաթիվ գանձերն ու տաղերը մեծ տարածում են գտել ոչ միայն «Ծովու բոլորը» (իմա՝ Վանա լճի շրջակայքում), այլև Մեծ Հայքի մյուս աշխարհներում՝ հարատևելով մինչև մեր օրերը: Նրա երաժշտաբանաստեղծական երևելի ժառանգությունից երաժշտական բաղադրիչով մեզ հասած նմուշներից է «Գոչէր հրեշտակն» տաղը («Գրիգոր» ծայրակապով), որի բանաստեղծական տեքստի հիմքում ընկած է Ավետարանի՝ Հիսուսի Հարություն ավետիսն ազդարարող դրվագը (Ղուկաս ԻԳ 3-6, Մատթեոս ԻԸ 5-6, Մարկոս ԺԶ 5-6): Մեզ հանդիպած վաղագույն ընդօրինակությունները գտնում ենք Գրիգոր Խլաթեցու վերոնշյալ ինքնագիր ՄՄ 5328 (թ. 36բ), ՄՄ 6851 (թ. 184բ) և ՄՄ 8366 (թ. 121բ) Գանձարաններում: Դրանց հաջորդում են Ծերենցի ինքնագիր օրինակից<sup>37</sup> 1408 թ. Յիպնավանքում Հովհաննես գրչի ձեռքով արտագրված Գանձարանը<sup>38</sup>, 1425 թ. Քաջբերունիքում գրիչ Գորգիի ընդօրինակած Գանձարանը<sup>39</sup> և բազմաթիվ այլ ձեռագրեր տարբեր հավաքածուներից: Պիտի կարծել, ամենայն հավանականությամբ, որ տաղը հորինված է նոր խմբագրված Գանձարան ժողովածուի համար, և խորագրում զետեղված «Տաղ ազնիւ»<sup>40</sup> բնութագրումն էլ պատկանում է հենց հեղինակին: Հետագայի գրիչները հավելել են նաև՝ «Տաղ անոյշ»<sup>41</sup>: Ձեռագիր Գանձարաններում ցուցում է տրվում «Գոչէր հրեշտակն» Հարություն տաղի կատարման «գոյն»-ի մասին, որն է՝ «Յայնժամ սիրով»-ը<sup>42</sup>, իսկ այս երկուսի «գոյն»-ով երգվում է «Զօրք երկնային զըւարթնոց» հորդորակը<sup>43</sup>:

<sup>36</sup> Տե՛ս Մատթեոս Զուղայեցու «Իսկակից Որդի», «Միակ ահաւոր Տէր եւ զաւրաւոր», Առաքել Բաղիշեցու «Ի Քէն հայցեմ աղբիւր բարութեան» և այլ գանձեր:

<sup>37</sup> Ա. Մաթեոսյան, Ս. Մարաբյան, նշվ. աշխ., էջ 47:

<sup>38</sup> Տե՛ս ՄՄ 3540, ք. 201բ:

<sup>39</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ե, ձեռ. 607, ք. 10ա:

<sup>40</sup> Տե՛ս Գրիգոր Խլաթեցու ինքնագիր Գանձարանը՝ ՄՄ 5328, ք. 36բ, նաև ՄՄ 425 (1466 ք.), ք. 9բ, ինչպես նաև՝ Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. տասնետորդ, Երուսաղեմ, 1990, ձեռ. 3296 (1498 ք.), էջ 98:

<sup>41</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ե, ձեռ. 607 (1425 ք.), ք. 10ա, ձեռ. 1662 (1468 ք.), ք. 41ա:

<sup>42</sup> Տե՛ս ՄՄ 428 (1489 ք.), ք. 7բ:

<sup>43</sup> Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. հինգերորդ, Երուսաղեմ, 1971, ձեռ. 1521 (1726 ք.), ք. 12ա:

երաժշտական բաղադրիչով պահպանվել է «Գոչեր հրեշտակն» տաղի երկու տարբերակ, մեկը՝ Կոմիտասի<sup>44</sup>, մյուսը՝ էմի Աբգարի<sup>45</sup> ձայնագրություններ:

Ինչպես և պատշաճ է Հարություն ավետիսն ազդարարող ստեղծագործությունը՝ կոմիտասյան օրինակն առանձնանում է վեհ-հանդիսավոր, հոետորական-պաթետիկ բնույթով (նոտային օր. 1): Քձ ձայնեղանակում ծավալվող, սոսկ երկու նախադասությունից բաղկացած այս տաղում երաժշտալեզվական սուղ միջոցներով հեղինակը հասնում է առավելագույն արտահայտչականության, և այսու՝ ներգործության մեծ ուժի: Ազդու և տպավորիչ է տաղի սկիզբը՝ «Գոչեր» բառի առանձնահատուկ շեշտադրումով (կվինտային թռիչքի միջոցով)<sup>46</sup>: Երկրորդ դասույթն առավել էքսպրեսիվ է, որ թռիչքային ինտերվալի մեծացման, հուզական տարրի թանձրացման ու բարձր հնչամասի շնորհիվ դառնում է տաղի դրամատուրգիական գագաթնակետը: Դրան հաջորդող երկու դասույթները ոլորապատույտ ներքնթացով տանում են դեպի հանգուցայունում:

Գոչեր հրեշտակն

(ձայնագրությունը՝ Կոմիտաս վարդապետի)

1

Գո - չեր հրեշտակն  
կա - նայր, դուք տակն զի

առ վի - մին  
զար - հու - ըրիք

վա - սն Յա - ռու - թեան  
լա - լով, խընդ - ըք

Յի - սու - սին.  
զկեն - դա - նին:

Տաղի բնութագրական հատկանիշները՝ լայնաշունչ վիպաբնարական

<sup>44</sup> Տաղի ձեռագիրը պահվում է Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում (Կոմիտասի դիվան, N 339), այն հինգ ձայնագրությունների շարքում, որոնց թվում է հանրահայտ «Հախիկ»-ը: Դրանք գրաված են միևնույն ինֆորմանտից, ինչպես վկայում է հետևյալ մակագրությունը. «Երգեց Գառնակերեան, ձայնագրեց Կ. Վ. Գևորգեան, արտագրեց Ս. Ա. Մելիքեան»: Տաղի հրատարակությունը տե՛ս Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, ութերորդ հատոր, Հոգևոր ստեղծագործություններ, խմբագրություն Ռ. Աթայանի, Գ. Գյոդակյանի, Գ. Դերոյանի, Եր., 1998, էջ 173:

<sup>45</sup> Երգաձայնութիւնք Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Պատարագամտոյց, գոր օրինակ երգի ըստ կարգի ի ժամանակի Մեծի Պահոց եւ յաւուրս տօնից, մասն Բ, Երկրորդ տպագրութիւն ընդարձակեալ, գրեալ ըստ արդի ձայնագրութեան յեմի Աբգարէ, Լայպցիգ, 1920, էջ 754:

<sup>46</sup> Դիտարկվող դասույթները նոտային օրինակում տե՛ս ըստ տողատման:

բնույթը, «գագաթնակետային բարբառումները»<sup>47</sup>, ռիթմական բազմաբնույթ պատկերները, սուր սինկոպացված ռիթմով վերընթաց թռիչքը ոճական հարազատության որոշակի եզրեր են հանդես բերում Գրիգոր Նարեկացու տաղերի հետ<sup>48</sup>, և այս առումով հանճարեղ տաղերգուի ստեղծագործական ոճի ազդեցությունն ակնհայտ է:

Պետք է անհրաժեշտաբար նշել, որ «Գոչըր հրեշտակն» տաղը հայ հոգևոր տաղերգության այն հազվագյուտ նմուշներից է, որում զուգորդվում են գաղափարական մեծ բովանդակությունն ու լակոնիզմը, կառուցիկությունն ու մտահղացքային ամբողջականությունը, երաժշտության և գրական տեքստի կատարյալ ներդաշնակությունը: Հեղինակը ստեղծել է երաժշտական մի մանրապատում, որում Տիրոջ Հարության առթիվ արտահայտած անհատական ապրումները հասցված են ընդհանրացման բարձր աստիճանի:

Գրիգոր Խլաթեցին հայտնի մանրանկարիչ էր, և ծաղկել է իր ընդօրինակած ձեռագրերը: Ուսումնասիրելով նրա մանրանկարչական ժառանգությունը, արվեստաբան Հ. Հակոբյանը նշել է դրանց ոճական առանձնահատկությունները՝ գծի ու գույնի տիրապետման վարպետությունը, մի քանի գույների հակադիր համադրությունը, գեղանկարչական արտահայտման ուրույն լեզուն, հատկապես՝ խիստ կարճառոտությունը, ավելորդ տարրերի բացակայությունը և այլն<sup>49</sup>, հատկանիշներ, որ բնորոշ են նաև նրա երաժշտական ոճին: Բազմաթիվ թեմատիկ նկարներ են պարունակում Խլաթեցու ինքնագիր մատյանները, որոնց թվում են 1393 թ. (Խառաբաստավանք, ապա Յիսկավանք)<sup>50</sup> և 1419 թ. (Յիսկավանք)<sup>51</sup> գրված Ավետարանները. Վերջինիս համար մանրանկարիչը բազմաթիվ նկարազարդումներ է արել՝ «Մկրտություն», «Այլակերպություն», «Հիսուսի հրաշագործությունը», «Ղազարոսի հարությունը», «Մուտք երուսաղեմ», «Համբարձում» և «Հոգեգալուստ»: Սակայն, ինչպես եզրակացնում է Հ. Հակոբյանը, այս շարքից բացակայում են նախկինում գոյություն ունեցած մի շարք տեսարաններ՝ «Ավետումը», «Ծնունդը», «Ոտնլվան», «Մատնությունը», «Խաչելությունը», «Հարությունը», «Դժոխքի ավերումը», որոնք կորսվել են<sup>52</sup>:

<sup>47</sup> Ն. Թանմիզյանի բնորոշումն է. տե՛ս Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Եր., 1985, էջ 222:

<sup>48</sup> Խոսքը Կոմիտասի կատարած գրառումների մասին է, որոնց թվում են՝ «Հափկ», «Հատուն, հատուն», «Սայլն այն իջանէր» և «Ահեղ ձայն» տաղերը:

<sup>49</sup> Հ. Հակոբյան, «Գրիգոր վարդապետ Խլաթեցին (Ծերենց) մանրանկարիչ», էջմիածին, 1975, N 12, էջ 53:

<sup>50</sup> Այս Ավետարանը կոչվել է Ամենափրկիչ և պահվել Ջավախքի Դիլիսկա գյուղի եկեղեցում: Ըստ նկարագրության՝ այն զարդարված է եղել Քրիստոսի Մարդեղության տասնչորս և չորս Ավետարանիչների յոթ պատկերներով. տե՛ս Ե. Լալայան, Ջավախք, Ազգագրական հանդես, Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 281, ինչպես նաև՝ Ժ. Գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Եր., 1950, էջ 599-601, Ա. Մաքևոսյան, Ս. Մաքաբյան, նշվ. աշխ., էջ 46:

<sup>51</sup> ՄՄ, ձեռ. 3714:

<sup>52</sup> Հ. Հակոբյան, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Բ, Երևան, 1982, էջ 76-78: Գրվում (էջ 161-163) ներկայացված են Խլաթեցու գրած և ծաղկած այն ութ ձեռագրերը, որ

Արդ՝ տաղն ունկնդրողի երևակայության մեջ հառնում է իլաթեցու ծաղկած այն մանրանկարը, որտեղ ուրույն երանգապնակով պետք է պատկերված լինեն Տիրոջ հրաշափառ Հարություն տեսարանը: «Գոչեր հրեշտակն» տաղն, արդարև, եռյակ արվեստների՝ բանաստեղծության, երաժշտության և մանրանկարչության մի հրաշալի համագործունն է. Արվեստներ, որոնց վարպետորեն տիրապետում էր հայոց միջնադարի բազմաշնորհ գործիչը՝ Գրիգոր իլաթեցին:

Տաղի կոմիտասյան նմուշին միանգամայն հակադիր է էմի Աբգարի ձայնագրած նորջուղայական տարբերակը (նոտային օրինակ 2)<sup>53</sup>: Քնարական այս երգում (Ռկ ստեղի ձայնեղանակում) չի նշմարվում գրական տեքստի և երաժշտության այն կատարյալ միասնությունը, որ կար նախորդ գրառման մեջ: Հարության ցնծալի ավետիան ազդարարող խոսքերն այստեղ զուգորդվում են սոսկ հայեցողական, հուզականության նվազագույն տարր<sup>54</sup> պարունակող երաժշտական բաղադրիչի հետ:

Գոչեր հրեշտակն  
(ձայնագրությունը՝ Էմի Աբգարի)

պահվում են Մաշտոցյան Մատենադարանում. այդ թվում՝ Նարեկացու Մատյանի երկու ընդօրինակությունները, 5328 և 8366 Գանձարանները և այլն, որոնցում կան միայն լուսանցագարդեր:

<sup>53</sup> Այն զետեղված է «Գանձ Զարուբեան» խորագրի ներքո, թեպետ ձեռագրական բոլոր սկզբնաղբյուրներից հայտնի է որպես *տաղ*. տե՛ս ՄՄ 425, 427, 474, 962, 2339, 2672, 8219, 8323 և այլն, ինչպես նաև բազմաթիվ ձեռագրեր Վենետիկի, Վիեննայի և այլ հավաքածուներից: «Գոչեր հրեշտակն» տաղի մեղեդիով է. Աբգարը ձայնագրել է նաև Հարության «Յարեա Աբայն երկնային» (էջ 757) և Պայծառակերպության «Աեաոն ցնձա՛ դու, Թափօր» (էջ 834) տաղերը, որ նույնպես ներկայացված են որպես «գանձ»:

<sup>54</sup> Էմի Աբգարի ձայնագրություններում նկատվող այս առանձնահատկությունը մատնանշել է Ռ. Աբայանը «Էմի Աբգարի Պատարագի կոմիտասյան տարբերակը, 1915 թ., Կ. Պոլիս» հոդվածում. տե՛ս Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, ութերորդ հատոր, Հոգևոր ստեղծագործություններ, էջ 231-232:



Գրիգոր Խլաթեցուն է վերագրվում նաև «Ի հանդէս տանի քո րախացեալ տօնեւք» տաղը՝ նվիրված Հնդհանրական եկեղեցու մեծ սրբեր Պետրոս հայրապետին և Աբիսողոմ սարկավագին: Հեղինակն այն գրի է առել իր ինքնագիր Գանձարաններում, որոնցից մեկը ՄՄ 5328 ձեռագիրն է (թ. 86բ): Տաղը գտնում ենք նաև ՄՄ 4011 Գանձարանում (Ժե դ., թ. 43ա), որի գաղափար օրինակը գրվել է 1400 թ. Խլաթեցու ձեռքով<sup>55</sup>: Նշանակում է՝ մեզ հայտնի վաղագույն գրառումն արվել է հենց այդ թվականին:

Հեղինակի անունը հիշատակվում է հետևյալ խորագրերում.

Ա. [...]ի հայրապետին, ի Գրիգոր վարդապետէ, ՄՄ 3540, Գանձարան, 1408 թ., Յիպնավանք, թ. 294ա:

Բ. Տաղ Պետրոսի հայրապետին ի Գրիգոր վարդապետէ, ՄՄ 5951, Գանձարան, 1414թ., տեղի՝ անհայտ, թ. 84ա:

Գ. Տաղ Գրիգորի ասացեալ, Կիլ. Կաթող. 74, Գանձարան, 1437 թ., Տիղիս, թ. 40ա<sup>56</sup>:

Դ. Մեղեդի ի Գրիգոր վարդապետէ, ՄՄ 5521, Գանձարան, 1445 թ., Աղթամար, գրիչ, ծաղկող և ստացող՝ Թովմա Մինասենց, թ. 47ա:

Ե. Տաղ Պետրոսի հայրապետին ի Գրիգոր վարդապետէ, ՄՄ 4768, Գանձարան, 1451 թ., Բերդաձոր վանք (Ռշտունիք), թ. 45ա:

Զ. Տաղ Գրիգոր վարդապետէ, Վեն. 613, Գանձարան, 1477 թ., Նեղրիի (Բալու) Ս. Աստվածածին, թ. 66բ<sup>57</sup>:

<sup>55</sup> Ա. Մաքևոսյան, Ս. Մարաբյան, նշվ. աշխ., էջ 47: Հեղինակները նշգրտում են, որ ՄՄ 4011 ձեռագրի « [...] գծողի սորա Գրիգորի» (թ. 76ա) հիշատակագրությունը ներմուծվել է գաղափար օրինակից: Խլաթեցու՝ 1400 թ. գրված ձեռագրից կատարված ընդօրինակությունների թվում են նաև ՄՄ 3540 և 6529 ձեռագրերը (վերջինից պահպանվել է ընդամենը 6 թերթ). տե՛ս նույն տեղում:

<sup>56</sup> Ա. Գանիկեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Անթիլիաս-Լիբանան, 1984, էջ 288:

<sup>57</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ե, սիւն. 361:

Է. Մեղեղի ի Գրիգոր վարդապետէ, Վեն. 604, Նեղրի, 1488 թ., թ. 99ա<sup>58</sup>:

Ը. Մեղեղի գեղեցիկ ի Գրիգոր վարդապետէ, ՄՄ 4423, Գանձարան, 1569 թ., Արծկէ, թ. 90բ:

Թ. Մեղեղի և տաղ ի Գրիգոր վ[արդապետէ], ՄՄ 430, Գանձարան, Ժե դար, Աղթամա՛ր, թ. 41ա:

Ճ. Տաղ ի Գրիգորէ, ՄՄ 5330, Գանձարան, Ժե դար, տեղի՛ անհայտ, թ. 42ա:

ՃԱ. Տաղ Պետրոսի հայրապետի ի Գրիգոր վարդապետէ, ՄՄ 5423, Գանձարան, Ժե դար, տեղի՛ անհայտ, թ. 32բ:

ՃԲ. Մեղեղի գեղեցիկ և ազնիւ ի Գրիգոր վարդապետէ, ՄՄ 2649, Գանձարան, Ժե դար, տեղի՛ անհայտ, թ. 124բ:

ՃԳ. Տաղ ի Գրիգոր վարդապետէ, ՄՄ 3053, Գանձարան, ԺԹ դար, Մոսկուա՛յ, թ. 15ա:

Ձեռագիր Գանձարաններում հանդիպում ենք «Ի հանդէս տօնի» սկզբնատողով անհայտ հեղինակի մեկ այլ տաղ՝ նվիրված Ղևոնդյանց քահանաներին, որի հնագույն ընդօրինակութիւնը տեղ է գտել Փարիզի Ազգային գրադարանի N 79 ձեռագրի մաս կազմող Տաղարանում գրված 1241 թ. (թ. 396բ)<sup>59</sup>: Գրիգոր Խլաթեցին իր տաղը հորինել է արդեն եղածի նմանողութեամբ: Այդօրինակ ոճական հնար մեր հեղինակը բանեցրել էր արդեն իր գանձ-տաղերում, ինչպիսին է, օրինակ, Ս. Սուքիասյանց նվիրված շարքը, որի առաջին միավորը՝ «Գանձ սիրոյ Քոյին», գրված է Գրիգոր Նարեկացու գանձերի («Գանձ Լուսոյ, փառակից Որդւոյ», «Գանձ անապական», «Գանձ անքնին» և այլն), իսկ երկրորդը՝ «Երջանիկ հոգիահրաշ երանելին Սուրբ Սուքիաս»՝ Ներսես Շնորհալու «Երջանիկ հոգիահրաշ երանելին Սուրբ Հովհաննէ» տաղի նմանողութեամբ:

Պետրոս Ալեքսանդրացի հայրապետին և Աբիսողոմ սարկավազին նվիրված տաղում Խլաթեցին օգտվել է նախօրինակ տաղի բառագանձից.

Տաղ Սրբոց Ղևոնդեանց ֆահանայիցն

Ի հանդէս տանի ձեր խրախացեալ՝

ցընձամբ հարք եւ վարդապետք եկեղեցոյ մանկանց,

Արեամբ Քրիստոսի փրկեալ մաքուր ժողովք,

պարառեալ հըրճուիմք յար կատարման ձերոյ ...

<sup>58</sup> Նույն տեղում, սիւմ. 394:

<sup>59</sup> R. Kévorkian. A. Ter-Stépanian, *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France*, Paris, 1998, p. 166.

Տաղ Պետրոսի հայրապետին և Աբխաղոմայ սարկաագիմ<sup>60</sup>

Ի հանդէս տանի քո բախացեալ<sup>61</sup> տանեմք<sup>62</sup>,

Հայր եւ վարդապետ,

Սուրբ Հայրապետ Պետրոս:

Արեամբ Քրիստոսի փրկեալ մաքուր ժողովս,

Պար առեալ հըրճուիմք յաւր կատարման քո,

Սուրբ Հայրապետ Պետրոս:

Ինչպէս բազմաթիվ այլ տաղեր, «Ի հանդէս տանի»-ն ևս նախադրվում է բազմապիսի բնութագրումներով, ինչպէս՝ «Մեղեդի անոյշ»<sup>63</sup>, «Տաղ անոյշ (անոյշ)»<sup>64</sup>, «Տաղն անոյշ ասա»<sup>65</sup>, «Տաղ ազնիւ»<sup>66</sup>, «Տաղ ազնիւ ասա՛, թէ գիտես»<sup>67</sup>, «Տաղ ազնիւ եւ գեղեցիկ»<sup>68</sup>, «Տաղ անոյշ և լաւ»<sup>69</sup>, «Տաղ գեղեցիկ եւ ոճով»<sup>70</sup>, «Տաղն է պարոն»<sup>71</sup> և այլն: Այն հղվում է կատարելու մինչ այդ արդեն

<sup>60</sup> Հարկ է նշել, որ Գանձարաններում և Տաղարաններում տաղին նախադասվող այս խորագիրը մշտապես նույնն է: Ուշ շրջանի Տաղարաններում (տե՛ս *Տաղարան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ*, Կ. Պոլիս, 1850, էջ 20 և 250) հանդիպում է ավելի ընդհանուր՝ «Հայրապետաց» խորագրի ներքո, ինչպէս ներկայացված է Ն. Թաշեյանի ձայնագրած Պատարագում. տե՛ս *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի*, Վաղարշապատ, 1878, էջ 111: Տաղն այնքան մեծ տարածում է գտել, որ հետագայում երգվել է նաև այլ սրբերի տոներին. տե՛ս, օրինակ, ՄՄ 10800 (1691թ., ք. 11ա), որտեղ «Պետրոս» անվան փոխարեն գրված է «այս անուն»: Տպագիր աղբյուրներից մեկում էլ տաղը գտնում ենք «*Կանոն Գիւտ նշխարաց Ս. Լուսաւորչին մերոյ*» խորագրի ներքո, տե՛ս *Տօնակարգ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ*, հրատարակեց *Սահակ Ա. Խանճեան*, Երկրորդ տպագրութիւն, Կ. Պոլիս, 1898, էջ 347: Ինչ վերաբերում է վերոնշյալ երկու տաղերի երաժշտական բաղադրիչներին, ապա համեմատությունը ցույց է տալիս, որ ուշ միջնադարյան ձայնագրյալ ժողովածուներում տարբեր տոներին երգվող և երգչական տարբեր ավանդույթներ ներկայացնող նմուշներն ըստ էության երգվել են միևնույն եղանակով. տե՛ս Ն. Թաշեյանի ձայնագրած տարբերակը, Հ. Չերչյանի գրառած և Արմաշում երգվող օրինակը (ՄՄ, Նորագույն հավաքածո 6, էջ 181), ինչպէս նաև «Մեղեդիներ, տաղեր եւ գանձեր Հայաստանեայց եկեղեցւոյ» ժողովածուում տեղ գտած նմուշը (Անթիլիաս, 1990, էջ 109):

<sup>61</sup> Ձայնագրեալ Պատարագի երկու հրատարակությունների (առաջինը՝ Վաղարշապատ, 1874, էջ 27) տեխտերում բնագրի «Քո բախացեալ» բառերը բաց են թողնված:

<sup>62</sup> Ձեռագրերում հանդիպում է նաև «ցնձամբ» տարբերակը:

<sup>63</sup> ՄՄ 423 (1742 թ.), ք. 83բ:

<sup>64</sup> ՄՄ 425, Ա. մաս (1466 թ.), ք. 109ա, ՄՄ 555 (ԺԵ դ.), ք. 30ա, ՄՄ 4011 (ԺԵ դ.), ք. 43ա:

<sup>65</sup> *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. Ե, ձեռ. 275 (ԺԵ-ԺԶ դդ.), ք. 121բ:

<sup>66</sup> ՄՄ 428, ք. 84ա:

<sup>67</sup> ՄՄ 427 (ԺԵ դ.), ք. 87բ:

<sup>68</sup> *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. Ե, ձեռ. 2130 (ԺԶ դ.), ք. 60բ:

<sup>69</sup> Ն. Պողոսեան, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոյ Յակոբեանց*, հատոր առաջին, Երուսաղէմ, 1966, ձեռ. 135 (1575 թ.), ք. 117ա:

<sup>70</sup> Ն. Պողոսեան, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոյ Յակոբեանց*, հատոր իններորդ, Երուսաղէմ, 1979, ձեռ. 3154, Գանձգիրք (ժամանակ՝ անհայտ), էջ 219ա:

<sup>71</sup> *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. Ե, ձեռ. 638, Գանձարան (ԺԵ-ԺԶ դդ.), ք. 94բ:


հայտնի այլ տաղերի «գոյն»-ով «Ով զարմանալոյ գոյն է»<sup>72</sup>, «Ի Խաչին տընկեալի գոյն է»<sup>73</sup>, «Տունկ անմահութեանի գոյն է»<sup>74</sup> և այլն: Հեղինակը կարողացել է կերտել դինամիկ երաժշտական պատում մերթ հուզախառն, մերթ էլ հանդարտ-հայեցողական նկարագրերի համադրությամբ: Հիմնական՝ Քնձայնեղանակին բնորոշ տիպական պտույտների անընդհատ տեղաշարժերը, որ ընդգրկում են և՛ դիմող ձայնի, և՛ վերջավորող ձայնի ոլորտները, ստեղծում են դրվագագարդ, լայնահոս մեղեդիական պատկեր (նոտային օրինակ 3):

Ի հսնդէս տօնի քո

<sup>72</sup> ՄՄ 428, ք. 84ա:

<sup>73</sup> ՄՄ 430 (ԺԵ դ.), ք. 41ա:

<sup>74</sup> Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. առաջին, ձեռ. 135, էջ 117ա:



Հատուկ քննության է արժանի տաղի ձայնեղանակային նկարագիրն իր բազմաթիվ զարտուղություններով, որոնք մեծ մասամբ գոյանում են դեպի հիպո-ոլորտ ծավալման արդյունքում: Առաջ են գալիս ոչ բնորոշ կիսահանգաձևեր, և այսու՝ ձայնակարգային նոր դրսևորումներ, որոնցում հատկապես կարևորվում է հիպո-ոլորտը բաղկացնող ձայնաստիճանների՝ վերնախաղի և բենկորճի առանձնահատուկ դերը (հատվածներ c, e, g և h): Վերնախաղի՝ որպես հանգչող ձայնի հանդես գալով երևակվում է ձայնակարգային մի նոր նախասկիզբ՝ ինքնատիպ գունավորմամբ, որն ըստ Ք. Քուշնարյանի՝ համապատասխանում է չորրորդ իջեցված աստիճանով և փոյուզիական հիմնաձայնով ձայնակարգին<sup>75</sup>:

Ջարտուղությունների ընթացքում աչքի են զարնում կրկնակի ձայնակարգին բնորոշ՝ ներհնախաղ կիսվար-պարույկ կիսվեր՝ մեծացրած սեկունդա ինտերվալը բաղկացնող հնչյունների ցայտուն կերպափոխումները: Իրանցից առաջինը տեղ է գտել է հատված e-ի վերջնամասում, որտեղ ներհնախաղ կիսվարի փոխարեն գործածվում է ներհնախաղը<sup>76</sup>: Երկրորդը, հիպո-ոլորտի առավել լայն ընդգրկմամբ (մինչև առաջին փուլ) և վերնախաղի վրա կիսահանգաձևով, նկատում ենք f հատվածում: Այստեղ արդեն արձանագրում ենք երկու ձայնաստիճանների միաժամանակյա փոփոխություն՝ ներհնախաղ կիս-

<sup>75</sup> Հետագայում, անջատվելով երկակի ձայնակարգից, այն վերանել է ինքնուրույն համակարգի. տե՛ս X. C. Кушнareв, *Вопросы истории и теории армянской монодиической музыки*, Л., 1958, сс. 532-533:

<sup>76</sup> Այսպիսի էական վերափոխման հետևանքով, ինչպես Ք. Քուշնարյանն է նկատում, կրկնակի ձայնակարգի հիմնաձայնի ոլորտը հարմոնիկ միմորից վերածվում է մեյորիկ միմորի. տե՛ս X. C. Кушнareв, *ук. соч.*, с. 534:

վարը վերածվում է ներհնախաղի, իսկ պարույկ կիսվերը՝ պարույկի, որով մի նոր նրբերանգ է ներմուծվում ձայնեղանակային ոլորտ:

Տաղում գործածված՝ արտերացված հնչյունաշարով զարտուղի մեղեդիները իստմբը հայ երաժշտության ձայնեղանակային համակարգում կոչվել է «խոսրովային»<sup>77</sup>, և իր կիրառությունն է գտել դեռևս Հովհաննես Օձնեցու, այնուհետև առավել լայն՝ ներսես Շնորհալու ստեղծագործության մեջ: Մեծ երգահանի մասին խոսելիս Կիրակոս Գանձակեցին ընդգծել է նրա ստեղծագործական ոճի այդ առանձնահատկությունը. «Եւ զի էր նա այր բանաւոր, բազում ինչ կարգեաց նա յեկեղեցիս քաղցր եղանակաւ, խոսրովային ոճով շարականս, մեղեդիս, տաղս և ոտանաւորս»<sup>78</sup>: Անհրաժեշտ է նշել նաև, որ զարտուղի հատվածները հերթագայվում են հիմնական՝ Գձ ձայնեղանակին բնորոշ պտույտներով պարբերաբար ընդգծելով այս կամ այն երանգավորման գերիշխող դիրքը: Տաղի վերջնամասում անսպասելիորեն հայտնված Բձ ձայնեղանակը ձայնեղանակային հակադրության մի նոր ոլորտ է ներբերում ի վերջո տեղը զիջելով գլխավոր՝ Գձ ձայնեղանակին՝ խոսրովային վերջավորող ձայնով: Այսպիսի առինքնող և ճաշակավոր համադրումներն, անշուշտ, վկայում են հեղինակի «գոյների» տեսության և գործնական կիրառման ասպարեզում ունեցած մեծահմուտ վարպետության մասին:

Գրիգոր հլաթեցու երաժշտաբանաստեղծական պատկառելի ժառանգությունից երաժշտական բաղադրիչով մեզ հասած հատկոտոր նմուշները հիմք են տալիս եզրակացնելու, որ ստեղծագործաբար յուրացնելով հայ երգաստեղծության նախընթաց ժամանակաշրջանի և հատկապես Գրիգոր Նարեկացու և ներսես Շնորհալու երաժշտարվեստին բնորոշ ոճական առանձնահատկությունները, նա միաժամանակ ստեղծել է անհատական դրոշմ ունեցող իր սեփական ոճը, որ խոր հետք է թողել հայկական տաղային արվեստում:

### Астхик Мушегян

#### Музыкально-поэтическое наследие Григора Хлатеци

Григор Церенц Хлатеци (1349-1425) был не только знаменитым церковным и общественным деятелем, но и историографом, поэтом, миниатюристом, писцом, комментатором, редактором и педагогом. Он был также блестящим музыкантом, искусным певцом и владел искусством хазового письма. Хлатеци внес ощутимый вклад в редактирование *Гандзарана* (сборника Праздничных песнопений), пе-

<sup>77</sup> Տե՛ս ն. Թանփոյան, *Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ*, Եր., 1973, էջ 23-25, նույնի՛ Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., էջ 189-191:

<sup>78</sup> Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 119: Ընդգծումը մերն է:

решотрел его в соответствии с изменениями и пополнениями, внесенными в армянский Церковный календарь, обогатил книгу новыми единицами и отредактировал старые. Кроме того он является также автором большого количества духовных песен (*гандз, таг, мегеди, ордорак*), посвященных праздникам Господним, святым Вселенской церкви и Армянской Апостольской церкви, а также армянским мученикам. В статье уточняется список песнопений Хлатеци в соответствии с его автографами.

Из внушительного музыкально-поэтического наследия Григора Хлатеци сохранились только два *тага*, содержащие музыкальный компонент. Это *таг* на Вокресение “Ангел восклицал” в записи Комитаса и Эми Абгара, а также *таг* “В торжество праздника твоего радостно ликуем”, посвященный великим святым Вселенской Церкви патриарху Петру и дьякону Авессалому, в записи Н. Ташчяна. Эти уникальные образцы позволяют сделать вывод, что творчески усвоив стилистические особенности армянского профессионального песнетворчества предшествующего периода, в особенности Григора Нарекаци и Нерсеса Шнорали, Хлатеци одновременно создал свой собственный стиль, оставивший глубокий след в армянском таговом искусстве.

### **Astghik Musheghyan** **The musical-poetic legacy of Grigor Khlatetsi**

Grigor Tzerents Khlatetsi (1349-1425) was not only a famous clergyman and public figure, but also historiographer, poet, miniaturist, scribe, commentator, editor and pedagogue. He was at the same time a brilliant musician, a good singer and a man skilled in *khaz* (neuma) writing. Khlatetsi contributed a lot to the new recension of the *Gandzaran* (Miscellany of Festive Chants); he revised and brought it into correspondence with the changes and additions introduced in the Armenian Church Calendar. He enriched the book with new units and edited the old ones. He is also the author of a great number of sacred chants (*gandz, tagh, meghedy, hordorak*) devoted to the Dominical Feasts and to saints of the Universal Church and the Armenian Apostolic Church, as well as to Armenian martyrs. The present article specifies the list of Khlatetsi’s sacred chants in accordance with his autographs.

Among the rich musical-poetic legacy of Grigor Khlatetsi only two chants have preserved their musical component: the *tagh* on the Resurrection “The Angel Exclaimed,” recorded by Komitas and Amy Abgar,

---

and the *tagh* “We Cheerfully Rejoice On the Solemn Day of Your Feast,” devoted to the great saints of the Universal Church Patriarch Peter and Deacon Absalom, recorded by N. Tashchyan. These unique extant samples lead us to the conclusion that Khatetsi not only assimilated creatively the stylistic peculiarities of Armenian professional song-art of the previous period, and especially those of Grigor Narekatsi and Nerses Shnorhali, but created his own style which left a profound trace in the Armenian art of *tagh*.